

Արձանագրություն N10

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 30.05.2018թ. նիստի

Օրակարգ.

1. Ամբիոնների վարիչների հաշվետվությունները 2017-2018 ուս. տարում ամբիոններում կատարված աշխատանքների վերաբերյալ:
2. Ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 22-ը:

1. ԼՄԵՑԻՆ՝

Ռոմանական բանասիրության ամբիոնի, ֆրանսիական բանասիրության ամբիոնի, Արտասահմանյան գրականության ամբիոնի, Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի, Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչները ներկայացրեցին 2017-2018 ուս. տարում ամբիոններում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի ժ.պ. Ռուզաննա Ղազարյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում փոխվել են մասնագիտական դասագրքեր, նախապատվությունը տալով ոչ միայն ամբիոնի դասախոսների կազմած, այլև և արտերկրյա համապատասխան մասնագետների կողմից ստեղծված դասագրքերին: Ամբիոնն անցկացրել է համաժամանակյա թարգմանության դասընթացներ՝ հրավիրված մասնագետների մասնակցությամբ: Նշվել է թարգմանչաց տոնը, մասնակից ուսանողների ներկայացրած թարգմանություններն ու գիտական հոդվածները պատրաստվում են տպագրության: Տպագրվել է ամբիոնի դասախոսների մոտ երկու տասնյակ հոդված: Ուսումնական գործընթացում լրջորեն վերահսկվում է միջանկյալ և ավարտական քննությունների ամբողջ գործընթացը, մանրակրկիտ քննարկվում ավարտական աշխատանքներին վերաբերող ցանկացած հարց: Ամբիոնը շարունակում է լավ աշխատել և փորձում է հաղթահարել որակի ապահովմանը խոչընդոտող յուրաքանչյուր պրոբլեմ: Դեկանի՝ գրանտային ծրագրերին վերաբերող հարցին Ռ. Ղազարյանը պատասխանեց, որ ծրագրեր ներկայացվել են, բայց որոշ հարցերում ԵՊՀ ադմինիստրացիայի կողմից աջակցություն չստանալու պատճառով գործընթացը դանդաղել է, և դեռևս հայտնի չէ, թե ինչպիսի արդյունքներ կգրանցվեն: Ամբիոնի վարիչը նաև դժգոհություն հայտնեց,

որ համալսարանի փաստաթղթային հսկայաձևավալ նյութերի թարգմանության ամբողջ բեռը դրվում է ամբիոնի վրա:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեսյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մեծ ձեռքբերումներ է ունեցել: Հաջող ընթացել են Թոեֆլի միջազգային թեստավորման քննությունները, որոշ դասախոսներն անցել են Այրեքսի միջազգային դասընթաց, և այժմ նրանք անցկացնում են նույն դասընթացը մնացած ամբիոնականների հետ: Տոմսկի ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ անցկացվել է միջազգային օլիմպիադա: Հրատարակվել են մենագրություններ, դասագրքեր, հոդվածներ: Ամբիոնի վարիչը նաև տեղեկացրեց, որ դասախոսների համար նախատեսված Այթեփի հաջորդ քննությունը տեղի է ունենալու հունիսի 5-ին: Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ Գ. Գրիգորյանը անարդարացի համարեց անգլերենի մասնագետների Այթեփ թեստավորում անցնելու փաստը՝ նշելով, որ ԵՊՀ-ում ստուգվում է միայն անգլերենի մասնագետների մակարդակը, մինչդեռ համալսարանի որևէ այլ մասնագետ նման թեստավորում չի անցնում: Դեկանը, պատասխանելով այս հարցին, ասաց, որ համալսարանների միջազգային ատեստավորման նորմերից մեկը դասախոսական կազմի անգլերենի իմացությունն է, և նշված գործընթացը մեծապես նպաստել է ԵՊՀ-ի միջազգային ատեստավորման գործընթացին:

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանը զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնը իրականացրել է հետևյալ գործունեությունը. լեզուների դասավանդման մեթոդաբանությունը արդիականացվել է, ձեռք են բերվել նոր դասագրքեր, միասնականացվել են գնահատման չափանիշները, ավարտին է հասցվել բակալավրիատի կրթական ծրագրերի բարեփոխման ծրագիրը, դասավանդման շարունակականությունը ապահովելու համար համապատասխան աշխատանքներ են կատարվել դպրոցներում, արտերկրյա մասնագետների կողմից անցկացվել են դասընթացներ և սեմինարներ ամբիոնի դասախոսների համար, հրատարակվել են ուսումնական ձեռնարկներ, երկու մենագրություն, հոդվածներ տեղական և միջազգային հեղինակավոր ամսագրերում, միջազգային համագործության ծրագրերի շրջանակներում բազմաթիվ ուսանողները մեկ կիսամյակ սովորել և սովորում են արտերկրյա համալսարաններում, շատ դասախոսներ անցել են իսպաներենի միջազգային թեստավորում և ստացել համապատասխան դիպլոմներ: Ամբիոնը նախատեսում է կազմակերպել պորտուգալերենի միջազգային թեստավորման վճարովի դասընթացներ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Առաքելյանը, որը արժանացել է 2017թ. նախագահական մրցանակի, զեկուցեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են ամբիոնում իրականացված լայնածավալ թարգմանություններ,

ավարտական աշխատանքների արդյունքները գոհացուցիչ են եղել, հրաշալի են պաշտպանվել նաև երկու թեկնածուական ատենախոսությունները, բոհի որոշմամբ ստեղծվել է արտասահմանյան գրականության գծով ատենախոսությունների պաշտպանության խորհուրդ, արտասահմանյան գրականության գծով ամբիոնը պատրաստվում է ներկայացնել բակլավրիատի նոր հայտ, ամբիոնի դասախոսներն անցել են որակավորման դասընթացներ: Որոշակի աշխատանքներ պետք է տարվեն նոր դասագրքերի ստեղծման հրատարակության գործում:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչ Ջ. Հարությունյանը նշեց, որ նախ խրախուսում է ֆակուլտետին վերաբերող բոլոր խնդիրների քննարկումը գիտխորհրդում: Նա զեկուցեց, որ ուզում է անդրադառնալ նաև հրատարակվող հոդվածների որակի խնդրին, քանի որ հրատարակվում են նաև ցածրակարգ հոդվածներ, որն էլ պատիվ չի բերում ԵՊՀ-ին և ֆակուլտետին: Ամբիոնի վարիչը նշեց, որ տեխնիկական առումով ֆրանսիական բանասիրության ամբիոնն ընդհանուր առմամբ հագեցած է, և որ իրենք կարող են տեխնիկական օգնություն տրամադրել նաև այլ ամբիոններին: Ամբիոնի նորաստեղծ կենտրոնում անցկացվել է երկու գիտաժողով, որին մասնակցել են նաև արտերկրյա մասնագետներ: Ամբիոնն ունի երեք ասպիրանտ, որոնք ակտիվ աշխատում են իրենց թեզերի վրա: Գրեթե բոլոր մագիստրոսները չորսամյա դասընթացներ են անցնում ֆրանսիական համալսարաններում: Միջազգային փոխանակման ծրագրերի շրջանակներում բազմաթիվ արտերկրյա դասախոսներ են աշխատել ամբիոնում, իսկ ամբիոնի շատ դասախոսներ՝ ֆրանսիական համալսարաններում: Ամբիոնի ուսանողները ֆրանսերենի իմացության հանրապետական մրցույթում առաջին մրցանակի են արժանացել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ռոմանական բանասիրության ամբիոնի, ֆրանսիական բանասիրության ամբիոնի, Արտասահմանյան գրականության ամբիոնի, Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի, Անգլերենի թիվ 1 ամբիոնի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների արդյունքները գնահատել լավ:

2. ԼՍԵՑԻՆ՝

Անդրադառնալով ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփման հարցին՝ ամբիոնների վարիչները նշեցին, որ ընդհանուր առմամբ պաշտպանությունները լավ են անցել, խնդրահարույց դեպքեր չեն եղել, արդյունքները նույնպես վատ չեն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

Որոշեցին՝

- Հրատարակության երաշխավորել Միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դասախոսներ Ս. Յաղուբյանի, Ա. Խաչատրյանի և Լ. Մադոյանի *English Grammar in Practice (Part III)* դասագիրքը:

- Ատեստավորել Ֆրանսիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Սեյեդե Շամս Գոլթոխին /գիտ. դեկ. բ.գ.թ., դոց. Ա. Մուրադյանն/:
- Ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Ռիմա Ազատյանին /գիտ. դեկ.՝ բ.գ.թ., պրոֆ.՝ Ա. Չուբարյանն/:
- Հաստատել Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Մելինե Ղոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ *Անձնավորման ոճիմաստային դրսևորումները անգլալեզու կենդանապատում տեքստում /հայերեն նյութի գուգադրությամբ/* և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆ. Ա. Ջիվանյանին:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝
30 մայիսի, 2018 թ.

Գ. Մուրադյան